


Ա. ԱՐԱՐԱՏԻ


ՀԵՐԲԱՐԻՈՒՄ



ԳՅՈՒՂՋԱՑ

1936

ՅԵՐԵՎԱՆ



13168

29 JUL 2010

21.02.2013

ՀԱՅՀ ԳՅՈՒՂԱՏՎԵՍԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԲՈՒՍԱԳԱՆԱԿԱՆ ԱՄՓԻՑ

58

4-84

Uu

ԴՈՑ. ԱՐԱՐԱՏՅԱՆ

ՀԵՐԲԱՐԻՈՒՄ

19165



1. ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐԵՆՔ ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ԲՈՒՅՍԵՐԸ

Մեր առաջ մի կարևոր խնդիր ե գրվում՝ ավելի մեծ չափով և ավելի լավ ոգտագործել մեր յերկրի բազմապիսի ու անսպառ հարստությունները, վորոնց թվում նաև մեր տեղական վայրի ու մշակովի բույսերը։ Սակայն ինչպես մյուս տեսակի, այնպիս ել բուսական հարստությունները լրիվ ոգտագործելու համար անհրաժեշտ ե նրանց ճանաչել:

Բույսերը ճանաչելու և նրանց ուսումնասիրելու համար կան քաղմապիսի յեղանակներ։ Սակայն ինչ յեղանակ ել կիրառելու միանք և բույսի վոր հատկությունն ել հետազոտելու լինենք, բոլոր գեղքերում ել անհրաժեշտ ե իմանալ, թե ինչ բույսի հետ գործ ունենք։ Այլ խոսքով ասած, պետք ե իմանանք, թե ինչ ե ավյալ բույսի գիտական անունը և վոր խմբին ե պատկանում։ Առանց գիտական անունն իմանալու հնարավոր չե գտնել գրականության մեջ յեղած տվյալները բույսի մասին, հետաքրքրող հարցի մասին տեղեկություն ստանալ մասնագետնիրից, փորձն ու գիտողությունը հաղորդել գրավոր կամ բանավոր կերպով ե այլն։

Գետք ե ասել, վոր բույսերը բնության մեջ աճում են համեմատաբար կայուն և որինաշափ խմբերով։ Նրանք կազմում են վորոշ բուսական խմբակցություններ կամ Ֆիտոցինոզները միասին կազմում են տեղի բուսականությունը Բուսական խմբակցությունների ուսումնասիրությունն ունի խոշոր գործնական և տեսական նշանակություն և զարմանալի չե, վոր ներկայումս նրանց ուսումնասիրում են առանձնապես յեռանդուն կերպով։ Ինքնըստինքյան պարզ ե, վոր Փիտոցինոզը, վորպես ամբողջություն, ուսումնասիրելու համար ել անհրաժեշտ է իմանալ, թե ինչ տեսակներ են մտնում նրա կողմի մեջ։ Անհրաժեշտ է հիշատակել, վոր զուտ Փլորիստիկ ուսում-

Նասիրությունն արդեն չի բավարարում մեր ներկա պահանջնարը և պետք է աշխատել այն կապել բուսաբանական այլ խնդիրների հետ:

Տեղի Փլորիստիկ ցուցակը ներկայացնում է բուսական տեսակների այն փոնդը, վորը գտնվում է մեր տրամադրության տակ: Բացի այդ՝ ճիշտ և լրիվ կազմակերպված լինելու դեպքում Փլորիստիկ ցուցակից կարելի յե իմանալ, թե վոր կետերում և ինչպիսի պայմաններում և տարածված յուրաքանչյուր տեսակը:

Բուսական կամ Փլորիստիկ ցուցակից կարելի յե իմանալ թե ինչ վայրի բույսեր են առում մեղ մոտ, վորոնց կարելի յե ոգտագործել կիրառական նպատակների համար: Այդ կարգի բույսերը կարելի յե բաժանել բազմաթիվ խմբերի ըստ գործադրության՝ վայրի բանջարույսեր, պտղատու ծառեր և թփեր, ներկատու և աղաղիչ բույսեր, դեղաբույսեր, յուղատու, կառուչուկատու և այլն: Վերոհիշյալ ըույսերն ոգտագործվում են մարդկանց կողմից զանազան ձևերով՝ 1) ուղղակի հավաքվում են հենց բնության մեջ և համապատասխան ձևով ոգտագործվում: Շատերը յերեխ գիտեն, թե մեր գյուղացիներն ինչքան բանջարելեններ և վայրի պառազներ են հավաքում գարնան և ամրան ամիսներին, սիրեխ, զրեչ, սպիտակ բանջար, ավելուկ, կանգառ, թելուկ, սինձրոխ, մող, յելակ, մոռ, տանձ, անտառային այլ պտղոներ և այլն: Նույն ձևով մեղ մոտ հավաքում են վալերիանա դեղաբույսը տորոնը և իշտակաթնուկ, ներկատու բույսերը և այլն:

2) Ոգտագործման յերկրորդ ձևը կինի այն, վոր արժեքավոր վայրի բույսերը մշակում են սիստեմատիկ կերպով, բազմացնում ու խնամում են: Վորպես որինակ կտրելի յե բերել վիկը, սիզախոտը, կարմիք յերեքնուկը կամ խնձորածաղիկը, վայրի պըտդառու ծառերը և թփերը վորպես պատվաստակալ կամ վայրակ:

3) Այլ խումբ են կազմում այն բույսերը, վորոնք մշակույթի մեջ են մտնում ձևափոխելուց հետո, կամ գործ են ածում մշակովի բույսերի վորեն հատկությունը բարեփոխելու համար: Այդպես են մի շարք վայրի պտղատու ծառեր և այլ բույսեր:

Բազմաթիվ վայրերի Փլորիստիկ ցուցակների հիման վրա կարելի յե նշանակել քարտեղի վրա տեսակի տարածումը, գծադրել նրա տեսալը կամ այն տարածությունը, վորտեղ նա հանդիպում ե: Արեալների հիման վրա, անում են մի շարք հետաքրքիր հետևություններ բույսերի ծագման և տարածման վերցալ, վորոնք ունեն տեսական և գործնական միջ արժեք մի-

շարք հարցեր պարզելու, նոր սորտեր առաջացնելու, մեր յերկիրը ստարերկրյա բույսեր մուծելու և այլ նպատակների համար:

Ֆլորիստիկ ցուցակները հնարավորություն են տալիս հետաքա հետազոտական աշխատանքներն ավելի խորացրած ձևով և արդյունավետ կատարելու:

Վերջապես այդ ցուցակներից ամեն մի դասատու, ուսանող, սուրբիստ, կղանտեսական և առհասարակ ամեն մի հետաքրքրվող իմանում ե, թե ինչ բույսեր են աճում նրա ըլջապատում, վորոնց նա կարող և ոգտագործել իր հատուկ նպատակների համար, կենդանի որինակների վրա սովորելու և սովորեցնելու գիտության տվյալները:

Խորհրդային Միության մեջ յերկրի բուսական հարստությունների ուսումնասիրությամբ զբաղված են Համամիութենական Գիտությունների Ակադեմիայի բուսաբանական ինստիտուտը և Լենինի անվան գյուղատնտեսական ակադեմիայի բուսաբուծական ինստիտուտն իրենց մասնաճյուղերի հետ միասին: Բացի այդ՝ Նույնպիսի աշխատանք են կատարում նաև ԲՈՒՀ-երի համապատասխան կարին ետները և ամբիոնները:

Մեզ մոտ, Խորհրդային Հայաստանում աեղի բուսական աշխարիկ ուսումնասիրությամբ զբաղված են ԽՍՀ Միության Գիտությունների Ակադեմիայի Հայաստանի բաժանմունքի ընագիտական թանգարանի բուսաբանական սեկտորը, մի քանի զոնալ կայաններ, Պետական համալսարանին կից Բիոլոգիական ինստիտուտի բուսաբանական բաժինը, գյուղատնտեսական ինստիտուտի և այլ ԲՈՒՀ-երի համապատասխան կարին ետները:

Սակայն պետք է շեշտել, վոր ինչքան ել շատ գործ անեն վերեւում թված հիմնարկությունները, այնու հանդերձ նրանք չեն կարող առանց ըլջաններում աշխատող բուսաբան սիրողների, գառատունների, գյուղատնտեսների, տուրիստների, ուսանողների, աշակերտների և կոլիսոզնիկների աջակցության կարճ ժամանակում լրիվ և ծավալուն կերպով ուսումնասիրել մեր յերկրի բույսերը: Մենք սևնենք ըրջաններ, վորոնց բույսերը բոլորովին ուսումնասիրված չեն և մեղ համար անհայտ են: Միայն աեղում աշխատող բնագետների ու բնասերների միջոցով կարելի յե կարճ ժամանակում վերացնել այդ անհանդութելի բացերը:

Սովորաբար թանգարանը և թված մյուս գիտական հիմնարկություններն իրենց ուսումնասիրությունը կատարում են մարդաբանային ձևով՝ 1—3 ամսվա ընթացքում: Հետազոտության

այսպիսի ձեի դեպքում բազմաթիվ կետեր զանց են առնվազան կամ ուսումնասիրվում են սիայն սի քանի որով, վորի հետևանքով ստացված նյութերը լինում են թերի և յերբեմն խոշոր բացեր են ունենում: Այս տեսակետից տեղում աշխատողը մեծ առավելություններ ունի: Նա հնարավորություն ունի ավելի լրիվ և բազմակողմանի ուսումնասիրելու իր շրջապատը և հարստացնելու դիտությունը բազմաթիվ հետաքրքիր փաստերով և դիտություններով:

2. ԲՈՒՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾԱՌՈՒՆԵՐ

Տեղական և բուսականությունն ուսումնասիրելու համար անհրաժեշտ ե հավաքել բույսերը և պահել նրանց այնպես, վոր չփառանան:

Դրա անհրաժեշտությունը բղխում է նախ նրանից, վոր միջակ էլ հնարավոր չե բոլոր բույսերը հենց տեղում ճիշտ վորոշել: Անգամ փորձված մասնագետները հավաքում են իրենց շատ ծանոթ բույսերը՝ հետագայում, ավելի հանդիստ պայմաններում, մանրամասն ու բազմակողմանի դիտելու համար:

Բացի այդ, պետք ե ասել, վոր հաճախ կարիք և լինում բույսն ուղարկել համապատասխան մասնագետների՝ գիտականորեն ճիշտ վորոշելու համար: Սովորաբար մասնագետ բուսարանն անգամ իր հավաքած բոլոր բույսերն ինքը չի վորոշում և վորոշ ընտանիքներ կամ ցեղեր ուղարկում ե այլ մասնագետների, վորոնք առանձնապես լավ են ճանաչում տվյալ բույսերը: Այդպիսով, բոլոր նյութերն ել մշակվում են ավելի ճիշտ և կատարյալ կերպով:

Հավաքածուներ կազմելու և անընդհատ հարստացնելու հետեւանքով հավաքվում ե մշակված նյութ, վորի հետ համեմտածելով կարելի յե ավելի ճիշտ վորոշել նոր հավաքած նյութերը: Վորքան այդ համեմտական նյութը հարստա և լավ մշակված լինի, այնքան նա արժեքավոր ե և հեշտացնում ե նոր նյութերի մշակումը:

Մնայուն հավաքածուները ներկայացնում են կատարած հետազոտության զոկումնատները: Նրանց հիման վրա հետազոտմ միշտ ել կարելի յե ստուգել՝ արդյոք բույսերը ճիշտ են վորոշված, թե վոր և այդպիսով պարզել ծագող թյուրիմացությունները:

Շատ մեծ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, վոր այդ հավաքածուների վրա սովորում և վորակավորվում են նոր կագրերը:

Նայած առաջադրված խնդրին՝ հավաքածուները տարրեր ձեռվով են կազմում, հավաքածուները լինում են զանազան տեսակի՝ հերբարիում, պտուղների և ուրմերի, ծառերի բների, հին գարաշը ջանների բուսական մնացորդների և հետքերի, բուսական արդյունքների, հավաքածուներ հեղուկների մեջ, հատուկ խնդիրների վերաբերյալ հավաքածուներ և այլն:

Հերբարիում ե կոչվում այն հավաքածուն, վոր կազմված և թղթերի արանքում մամուլի տակ չորացրած բույսերից կոմ նրանց բնորոշ մասերից:

Պտուղների և սերմերի հավաքածուն կոչվում ե նաև կարութիւնական հավաքածու:

Մասերի մասերի՝ հավաքածուն կոչվում ե նաև ղենդրոլոգիական (ծառագիտական) հավաքածու:

Հին դարաշրջաններից մնացած բուսական հետքերի և մնացորդների խնդրով զբաղվում ե պալեո-բուսաբանությունը (պալեոբուսանիկան): Այդ էրերի հավաքածուները կոչվում են նաև պալեոբուսանիկան:

Բուսական արդյունքների հավաքածուները կազմված են լինում ոգտակար պատղներից և սերմերից, շինափայտերի նմուշներից, բուսական ներկերից, ծամոններից և այլն:

Հեղուկների մեջ պահում են այնպիսի բուսական մասեր, վորոնք այլ ձեռով պահելու գեղքում խիստ ձևափոխվում և անձանացնելի յեն դառնում, որինակ՝ հյութալի պտուղները, սունկերը, վորպես կոնսերվող հեղուկ գործ են ածում սպիրա, ֆորմալին և այլն:

Հատուկ խնդիրների վերաբերյալ հավաքածուների թեման կարող ե լինել մարզագետներ, անտառը, ճահիճը, աղաղիչ, ներկատու բույսերը, չորասեր բույսերը, լույսի և խօնավության ազգեցությունը բույսերի վրա և այլն:

Ֆլորան ուսումնասիրելու համար անհրաժեշտ ե կազմել հերբարիում: Այս զբաղույթի մեջ մենք կպատմենք, թե ինչպես պետք է կազմել հերբարիում: Մյուս տիպի հավաքածուների վերաբերմամբ կտանք միայն համապատ ցուցումներ:

Հերբարիում կազմելու համար անհրաժեշտ ե՝ 1) հավաքել բույսերը, 2) չորացնել, 3) վորոշել, 4) կարել թղթի վրա, 5) դասավորել վորեն սիստեմով, 6) կազմել ցուցակներ և ցանկեր:

3. ԱՆԳՐԱՎԵՐ ՊԱՐԱԳԱՆԵՐ


Նախքան բույսերի հավաքելուն անցնելը, պետք է ձեռք բերել մի քանի անհրաժեշտ պարագաներ:

Վարոշ գեղքերում բույսերը կարելի յե հավաքել ուղղակի ձեռքով, սակայն դա միշտ չի հաջողվում, վորովհետև կամ արմատները խորն են լինում, կամ հողը պնդացած, և կամ թե չե ճյուղերը հաստ ու ամուլ են լինում: Բացի այդ, ձեռքով հանելը շատ անգամ այնքան ել ցանկալի ձև չե, վորովհետև այս գեղքում պալարները կամ այլ հաստացած մասերը պոկվում են, արմատները կտրատվում և մնում են հողի մեջ: Ահա այդ ե պատճառը, վոր անհրաժեշտ ե լինում գործածել փորող և կտրող գործիքներ:

Կորպես փորող գործիք շատ հարմար ե բուսաբանական բանիկը: Սա յերկու-յերեք մատի լայնության (3—4 սանտիմետր) և 20—25 սանտիմետր յերկարության ուռը բերանով 2—3 միլիմետր հաստության յերկաթի թիթեղ և փայտե կոթոփ: Բահիկը սովորաբար կրում են կողքից կախած պատյանի մեջ: Բացի այդ, նա պետք է կապված լինի գոտուց մեկ մետր յերկարության պարանով: Վերջին նախզգուշությունը նրա համար և, վոր բահիկն անուշադրության հետևանքով խոռերի մեջ չկորչի: Բահիկը կարելի յե փոխարինել մեծ և ամուլ դանակով, փոքր բրիչով, ուրագով և անգամ սրածայր ամուլ փայտով:

Մեծ բույսերից վորոզ մասեր վեցցներու համար պետք է ունենալ այգեգործական ծուռ դանակ և այգեգործական մկրտա, իսկ ծառի ճյուղ կտրելու համար շատ հարմար ե փոքր սղոցը: Գանակը հարկավոր ե նաև պալարները, կոճկեզները և հյութալիք ու հաստ ցողունները կիսելու համար:

Զրաբույսերն ափին մոտեցնելու համար պետք է ունենալ յերկար փայտ ծայրին կարթ: Բույսերը ժայռերի ճեղքերից արտառու հանելու համար գործ են ածում յերկար մեխ՝ ծայրը ծածեց:




Նկ. 1. Բուսարկը

Յաղկավոր և առհասարակ մեծ բույսերի համար ե, իսկ փոքրը՝ սուն կերի, մամուռների և այլ փոքր բույսերի համար: Բուսարկը կա-

շելի յե պատրաստել նաև բարակ առխառնկից կամ դիկտից: Բուսարկը հարմար ե միայն այն ժամանակ, յերբ քիչ բույս և հավաքվում, վորովհետև նրա մեջ շտա բույս չի տեղավորվում: Բացի այդ, բույսերը նրա մեջ խառնվում են իրար և յերկար ժամանակ մնալու դեպքում մկանում են փշանալ և նեխին:

Ավելի հարմար ե կլեննկե պարկը, վորի մեջ ավելի շտա բույս և անզավորվում և բույսերն ել ավելի լավ են մնում: Սակայն կլեննկե պարկի մեջ և բույսերը խառնվում ու խճողվում են իրար:

Հավաքած բույսերը անզավորելու համար ամենից հարմարը բուսապանակն ե: Վերջինս կազմված ե ստվարաթղթի կամ դիկտի յերկու հավասար կտորից 50×30 սանտիմետր մեծության: Մի քանի սանտիմետր ավելի կամ պակաս լինելը չի խանգարի. մենք այսաեղ տալիս ենք միայն ամենահարմար և գործածակոն չափը, վորը հեշտացնում և նաև հետազա աշխատանքը և ընդունված և համարյա բոլոր խոչոր բուսաբանական հիմնարկներում: Այդ յերկու կտորների վրա վորոց տեղերում անցքեր են թողնված, վորոնց միջով փոկեր են անցկացրած (տես նկ. 2): Բուսապանակի մեջ դնում են 20—40 հատ մի առկ ծալած թղթեր՝ բացվածքը դեպի վեր: Բուսապանակի մեջ բավական շտա բույս և անզավորվում: Նրա մեջի բույսերը չեն թերթների մեջ և մոռը դնում են թղթի կտոր՝ համապատասխան տվյալներով՝ տեղի և ժամանակի մասին: Այդ ավալները կարելի յե նշանակել նաև ուղղակի թղթի ծայրին: Բուսապանակն սւնի նաև այն առավելությունը, վոր բույսերը նրա մեջ յերկար ժամանակ կարող են առանց փշանալու մնալ:




Նկ. 2. Բուսապանակ

Բուսապանակի մեջ դնելու համար զործ և ածվում փաթաթելու գործ թուղթ, վորով սովորաբար խառնութներում իրեր են փաթաթում: Այդ թուղթը թանգ չե, բավական լավ ժնում ե խռնավությունը և ամուր ե: Գնքուզ բույսերի համար պետք և ունենալ մի քանի թերթ ավելի նուրբ ծծան թուղթ:

Մի քանի թերթ չծծող տմուր թուղթ և պետք և ունենալ յըաշըույսերի համար: Բույսերը կարելի յեւ տեղափորել նաև ճենիքագրերի մեջ, վորոնք բավական լավ ծծում են և ամուր են:

Հաճախ հեռավոր հքուկուրսիաների ժամանակ կարիք եւ լինում վերցնել նաև բուսաբնածկան ցանց: Դրա անհրաժեշտությունը բզիւմ ե նրանից, վոր բույսերը բուսապանակի մեջ շատ յերկար ժամանակ պահել չի կարելի: Նայած յեղանակին, 1—3 որից հետո նրանք սկսում են թառամեր չորանալ, վորից հետո ուղղողի անհնար և բույսերն ուղղել և նրանց բնական ձեւ տալ: Այդ պատճառով ել պետք ե բույսերը տեղափոխել բուսաբնական ցանցի մեջ: Վերջինս կազմված ե յերկու փայտե կամ հասու յերկաթալարի շրջանակից, վորի մեջ ամրացած և մետաղյա ցանց: Շրջանակի յերկարությունն ե 50 սանտիմետր, լայնությունը՝ 30 սանտիմետր:



Նկ. 3. Բուսաբնական ցանց կամ մամուլ

Ժեշտ են կողմնացույցը, խոշորացույցը, պինցեալ, տեղի քարտելը, բարձրաչափը, մետրոնոց ձեռնափայտը՝ սանտիմետրով, ջերմաչափը և բույսերի վորոշիչը:

4. ԽՆՉԳԵՍ ՀԱՎԱԲԵԼ ԲՈՒՅՈՒՐԵՐԸ ՃԵՐԲԱՐԻՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Թե ինչ բույսեր պետք ե հավաքել հերբարիումի համար կախված ե հավաքողի առաջադրած նպատակից: Յեթի խնդիր ե գրվում օւսումնասիրեր, դիցուք, ջրային բուսականությունը, մաքախոտերը, անտառը կամ մի այլ բուսական խմբակցություն, ապա հավաքում են միայն ավյալ խմբակցություն մեջ մտնող բույսերը: Յեթե հետաքրքրվում են ազաղիչ լեթերատու, լուղատու, տեխնիկական կամ այլ գործադրական բույսերով, ապա հավաքում են միայն այդպիսները: Յեթե հետաքրքրվության առարկան հֆեմերներն են, ապա եքսկուրսիայի յեն դուրս դալիս դարնալք կոմ աշնանք: Սնկերն ուսումնասիրելիս հավաքում են նրանց

դանաղան տեսակները աղբակույտերում, հողի մեջ ծառերի և այլ բույսերի վրա և այլն վերջապես տեղի ամբողջ ֆլորան հետազոտելու համար հավաքում են բոլոր բույսերն սկսած վաղ գտրնանից մինչև ուշ աշուն:

Առաջաղղված խնդրից ե կախված նաև այն, թե ինչպես պետք ե հավաքել բույսերը իհարկե, բոլորովին հատուկ ձեռով և մեծ քանակությամբ պետք ե հավաքել քիմիական անալիզի համար: Մինչդեռ բույսերի տեսակը վորոշելու համար վոչ միայն քանակն ե հետաքրքիր, այլև այն, վոր բույսերը լավ չորացված լինեն, և առանձնապես լավ ներկայացված լինեն վորոշման համար անհրաժեշտ բնութագրական մասերը: Այլ պահանջ ե ներկայացվում ցուցադրության համար հավաքող նյութին, այս գեղագում հատկապես կարեոր ե, վոր բույսերը լինեն առաջ և ինամբով հավաքված:

Այս գրքույկի մեջ մենք կանգ կառնենք գիշավորապես այն հարցի վրա, թե ինչպես պետք ե հավաքել բույսերը Փլորիստիկ հավաքածուների համար:

Ինչպես արդեն ասել ենք, Փլորիստիկ հավաքածու կազմելու համար պետք ե հավաքել անխտիր բոլոր բույսերը: Սակայն յերբեմն սկսնակ հավաքողը զաշտ դուրս գալով՝ շփոթվում ե բույսերի բազմազանությունից: Այդ պատճառով ել սկսնակին խորհուրդ ենք տալիս շրջապատը բաժանել մասերի: Առաջին առաջին հավաքել միայն ամենամոտ վայրերից և միայն մի մասում: Յերբ ահսնում ենք, վոր ընտրած վայրի համարյա բոլոր տեսակները հավաքված են, կարելի յեւ ավելի հետու դնալ կամ նոր ուղղություն ընտրել ծանկալի յեւ, վոր նախքան դաշտ գուրս գալը գրականության միջոցով ծանոթանալք ավյալ տեղի բույսերին:

Բոլորն ել նկատած կլինեն, վոր վորեւ տեղի բոլոր բույսերն ել միաժամանակ չեն անում: Վաղ գարնանն առաջին հերթին հանդես են գալիս գարնանային եփեմերները և գեղփաները: Եփեմեր են կոչվում այն բույսերը, վորոնք շատ կարճատե կյանք ունեն և անում ու պառու են տալիս միայն գարնան կամ աշնան ընթացքում, քանի դեռ հողը հարուստ է ձյան և անձրեների ջրերով: Գեղփաներները են նման են եփեմերներին, միայն թե նրանք բազմամյա բույսեր են և կյանքի մեծ մասն անց են կացնում զետնի տակ պալարի, կոճղեղի կամ կոճղարմատի ձեռով: Այնուհետև հանդես են գալիս վաղ գարնանը ծառաբույ-

ակըլը Նըանց հետ միաժամանակ ծաղկում են ծառերից և թփերից շատերը Ավելի ուշ սկսում ե զարդանալ խոտաբուլսերի մեծ մասը: Վերջապես աշնանը ծաղկում են նոր բույսեր և ավելի ուշ անձրևների ժամանակ՝ աշնանալին եֆեմերները: Պարզ ե, զոր գորևե շրջանի լրիվ ֆլորան ճանաչելու համար անհրաժեշտ ե տարվա մեջ մի քանի՛ առնվազն լերեք անզամ զանազան ժամանակ հաճախել նույն տեղերը:

Լրիվ ֆլորիստիկ հավաքածու կազմելու համար ցանկալի յե հավաքելուն զուգնթաց հետազոտել և վորոշել հավաքած նյութը: Այդ նյութին մոտիկից ծանոթանալու գեղքում եքսկուրսիան դեպի նույն վայրը գառնում և ավելի հետաքրքիր և իմաստութիւն կրկնակի անդամ հաճախելիս արդեն հավաքում են վոչ թե ամեն պատահած աեսակը, այլ ընտրությամբ՝ հատկապես այն բույսերը, զորոնք վորեւ աեսակեսից հետաքրքրական են և կամ պակասում են հերբարիումի մեջ: Առհասարակ չպետք ե ձևական կերպով հավաքել, այլ դրան զուգընթաց պետք ե մոտիկից ծանոթանալ բույսերի կազմությանը, խմբերին և նրանց արտադրական աշխատկությանը:

Ֆլորիստիկ հավաքածուի համար բույսերը պետք ե հավաքել լրիվ, այնպես զոր բույսի վերաբերյալ հերբարիումից ստացվի ճիշտ և լրիվ պատկերացում: Անհրաժեշտ ե, զոր լինեն թե վերերկրյա և թե ստորերկրյա մասերը: Շատ սկսնակներ բոլորվին ուշադրություն չեն դարձնում ստորերկրյա մասերի՝ արմատի, կոռնղեղի, պալարի վրա: Մինչդեռ հաճախ առանց այդ մասերի բույսի ճիշտ վարուումը շատ դժվարանում է: Որինակ, մեզ մոտ լայն տարածված սոլիսի կամ սխտորուկի վայրի տեսակներն առանց կոռնղեղի վարուելը շատ դժվար է:

Վերերկրյա մասերը ևս պետք ե հավաքել լրիվ, պետք ե լինեն աներև տված ճյուղերը ծաղիկներով և պտուղներով: Յեթե պետք որդանները միաժամանակ չեն լինում բույսի վրա, ապա պետք ե բույսը հավաքել մի քանի անգամ՝ համապատասխան ժամկետներին: Որինակ, ծառերից շատերը նախ ծաղկում և ապա աներև են առվաս, իսկ պառող տալիս են բավական ուշ: Նույնը կարելի յե առել նաև շատ խոտաբուլսերի մասին: Այսպես որինակ, «մայր և խորթ մայր» կամ խոճկորիկ (Tussilago farfara L.) կոչված բույսը գարնանը տալիս ե ծաղկող ցողուններ՝ մանր տերեներով, վորոշ ժամանակից հետո հասունանում են պտուղները: Վերջապես բավական ուշ տալիս ե մի քանի խորիս տեղերը:

Յերկտուն բույսների թե իգական, և թե արական որինակներից պետք ե նմուշ վերցնել: Պետք ե ի նկատի ունենալու վոր միասեռ ծաղիկներին կից նույն բույսի վրա կարող են լինել նաև յերկսեռ ծաղիկներ: Յերկտուն են ուռենին, թութք գալուուկը (Humulus Lupulus), թթվանջուկը և այլն:

Բույսեր հավաքելիս պետք ե նկատի ունենալ նաև հերբարիումի թերթի մեծությունը: Հերբարիումի թերթի ընդունված չափերն են՝ յերկարությունը՝ 45—50, իսկ լայնությունը՝ 26—30 սանտիմետր: Բույսերը պետք ե վերցնել անպես, վոր նրանք լավ տեղավորվեն՝ ընդունված մեծության թերթի վրա և ծայրերը դուրս չմնան: Ընդհակառակը, վերջիններս պետք ե թերթի յերեց մի յերկու սանտիմետր խոր լինեն: Այստեղից պարզ է, զոր բոլոր բույսերն ել չի կարելի միատեսակ հավաքել: Փոքր բույսերը վերցնում են ամբողջական: Քիչ ավելի մեծ բույսերը նույնպես վերցնում են ամբողջական, միայն թե մեկ կամ յերկու տեղից ծալում են, այսպիսով կարելի յե թերթի վրա տեղափորել մեկ մետրից քիչ ավելի յերկար բույսերը: Փարթամ բույսերից հեռացնում են վորոշ ճյուղեր և տերեներ այն հաջողով, վոր մնացածը լավ տեղավորվի հերբարիումի թերթի վրա: Թե ճյուղերը, և թե տերեները պետք ե կարել զոչ թե հիմքից, այլ քիչ բարձրեց, վորպեսզի կարելի լինի իմանալ, վոր այդ տեղերում հոմապատասխան որդաններ են լիղեր Ավելի խոշոր բույսերից պետք ե վերցնել ծաղկաբուլը կամ նրա մի մասը՝ վերին մեկ կամ յերկու տերեւով, վորոնք իրենց ձևով և մեծությամբ վորոշ չափով տարբերվում են ցողունային տերեներից: Մասերից պետք ե վերցնել ճյուղեր՝ բողբոջներով, տերենով պատաճ, ծաղկած և պտուղներով: Պետք ե նմուշ վերցնել նաև փայտացած մասից:

Հերբարիումի համար բույսի լուրաքանչյուր տեսակից պետք ե վերցնել մի քանի որինակ: Այդ անում են նախ. Նրա համար, վոր յեթե բույսերը փոքր են, ապա ամեն մի թերթի վրա կարվի 2—8 որինակ, մինչև վոր թերթը լցվի: Բացի այդ, հերբարիումում միշտ ել պետք ե ունենալ կրկնակի որինակներ: Կրկնակի յեն համարվում մինհուն տեսակին պատկանող բույսերի այն որինակները, վորոնք հավաքված են միաժամանակ և մինհուն տեղում: Յեթե նույն տեսակի բույսը նույն տեղից ե հավաքված, բայց այլ որ կամ նույն որն ե հավաքված, սակայն ուրիշ տեղից, նաև կրկնակի որինակ համարվել չի կարող: Կրկնակի որինակները հարկավոր են նախ անդամահատելու կամ մասերի բաժանելու

համար, վորն անխուսափելի յե բույսերը վորոշելու համար: Բա-
յի այդ, հավաքած նյութը վորոշելու համար մասնագետներին
աղարկելու դեղում պետք է մեկական կամ յերկուական որի-
նակ պահել, վորովհետև վորոշ դեղքերում ուղարկված նյութը
դարձ ե կորչել կամ փշանալ կրկնակի որինակներն անհրաժեշտ
են նաև փոխանակելու համար:

Այս միջոցով կապ ե հաստատվում զանազան բուսաբանական
հիմնարկությունների կամ բուսաբանների միջև, վորի շնորհիվ
նրանց հերթարկությունները հարստանում են նորանոր տեսակներով:
Փոխանակությունը հեշտացնելու համար խոշոր բուսաբանական
հիմնարկություններն ամեն տարի կամ յերկու-յերեք տարի մի
անգամ հրատարակում են իրենց ունեցած կրկնակի որինակների
ցուցակը: Վերջապես կրկնակի որինակներն անհրաժեշտ են նաև
հիմնական հերթարկությունի փշացած որինակները փոխարինելու հա-
մար: Սակայն շատ որինակներ հավաքելու ամենամեծ արժեքն
այն է, վոր այդ միջոցով հեշտանում ե տեսակի ուսումնասիրու-
թյունը: Սա պիտի հասկանալի կլինի, յեթե հիշենք, վոր նույն
տեսակին պատկանող բույսերը, ինչպես և կենդանիները, վորոշ
չափով իրարից տարբերվում են, և մի խոշոր մասը միջին տիպից
բավական շեղված ե լինում:

Սակայն սկսնակներին պետք ե զգուշացնենք, վոր հազվա-
քյուտ բույսեր լինելու դեպքում բոլորը չպետք ե հավաքել այլ
մասը պիտի թողնել հետագա բազմացման համար:

Յերեք չպետք ե մոռանալ վոր հավաքած բույսերը պետք
ե չորացվեն, հետաւա մշակման յենթարկվեն և ինսամքով պահվեն:
Ավելի լավ ե քիչ հավաքել, բայց հավաքածը ինսամքով չորացնել
ու մշակել, քան մեծ քանակությամբ հավաքել և հետո միների
կոմ ցեցի բաժին դարձնել:

Եքսկուրսիա գնալիս անպայման պետք ե վերցնել բավա-
ր քանակությամբ թուղթ՝ բույսերը հենց տեղում դասավորե-
լու համար: Ինչպես մեր, այնպես ել շատ այլ բուսաբանների
փորձը ցույց ե տվել, վոր թարմ վիճակում բույսերն ավելի հեշտ
ե դասավորել, մանավանդ, վոր հոգնած տուն գալով շատ անգամ
տիպված են լինում դասավորումը հետաձգել հետեւյալ որվան,
վորի հետեւանքով բույսերը վորոշ չափով թառամում և անգամ
անպետքանում են հերթարկությունի համար: Թղթի յուրաքանչյուր
թերթը պետք ե լինի յերկու հերթարկությունի թերթի չափ և մեկ
համար: Ինչպես արդեն ենք, թղթերը կրում են

առաջանակի մեջ: Բացի այդ, ցանկալի յե վերցնել նաև բուսաբարկու-
թյուններն պարզ կամ փոքր կողով: Կեռնկե պարկը հարմար լինե-
լու համար պետք ե ունենա 40—50 սմ լայնություն և 30—40
ամստի մեջ խորություն: Զանազան տեղերում հավաքված բույ-
թերն իրար հետ չխառնելու համար պետք ե վերցնել մի քանի
պարկ:

Հերթարկությունի համար պետք ե վերցնել տիպիկ որինակները:
Էկվանդ, վնասված, շատ մեծ կամ փոքր որինակներից պետք ե
թուսափել կամ այդպիսիները պետք ե պահել առանձին և մոտը
գամապատասխան նշում անել: Բույսը պետք ե հողից հանել ար-
մատով և այլ ստորերկրյա մասերով: Յեթե բույսը խորն և
նստած հողի մեջ, ապա պետք ե փորել մի քանի կողմից: Բույսը
հանելուց հետո պետք ե զգուշությամբ հողը թափ տալ և ապա զնել
պարկի կամ կողովի մեջ: Յերբ պարկի կամ կողովի մեջ բավական
շատ բույս և հավաքվում, մի հանգիստ տեղ բույսերը տեղափո-
րում են բուսապանակի մեջ: Բույսերը դասավորում են ծալած
թղթերի մեջ: Պետք ե հիշել վոր բույսերը հենց այդ թղթերի
մեջ ել մնում են մինչև չորացնելը: Այդ պատճառով ել բույսերը
դասում են ծալած թղթի մի կեսի վրա և ուղղում այնպես, վոր
տերեներն իրար վրա չընկնեն և կամ ծալված չմնան: Յեթե տերե-
ներն ազատ չեն տեղավորվում և մի քանիսն ընկնում են իրար
վրա, այդ դեպքում նրանց արանքում թուղթ են զնում: Մաղիկ-
ներն առհասարակ ավելի նուրբ են. լավ չորացնելու համար նրանց
յերկու կողմից ել պետք ե ծծան թուղթ կամ բամբակի բարակ
շերտեր զնել: Հաստ և հյութալի մասերը՝ յյութալի ցողունները,
պտուղները, պալարները, կոճկեզները պետք ե կեսել, յյութալի
մասը ներսից հեռացնել և կեսերը բաց տեղավորել թղթի վրա:
Բույսերը պետք ե դասավորել այնպես, վոր նրանք ծածկեն թղթ-
ի կեսն ամրողովին: Այդ անում են գլխավորապես նրա համար,
վոր թղթերն իրար վրա դասավորելիս մեջտեղը կամ մի կողմն ու-
ռած չսուցվի: Բացի այդ, թղթին ել ավելի լավ և ոգտագործ-
վում: Պետք ե աշխատել, վոր մի թերթի վրա նույն տեսակի կամ
միանման բույսեր լինեն: Յերբ թղթի կեսը լրիվ ծածկվում և
բույսերով, նրա մի ծայրին գրում են անհրաժեշտ տեղեկություն-
ները և ապա մյուս կեսով ծածկում: Լցված և դատարկ թղթ-
երն առանձնացնելու համար կարելի յե արանքում դնել նույն
մեծության ստվարաթղթի թերթիկ:

Հավաքած բույսերին վերաբերող ամենահրաժեշտ տեղե-

կություններն են աշխարհագրական պունկտի և հավաքելու ժամանակի մասին յեղած տվյալները։ Առանց այդ նվազագույն և հիմնական տեղեկությունների հավաքած նյութերը վոչ մի գիտական արժեք չունեն։ Տեղը պետք է նշանակել վորոշ, վորպեսզի հետակարելիք լինի գտնել նույն տեղը։ Սակայն, բացի այդ տեղեկություններից, անհրաժեշտ է նշանակել նաև տվյալներ բույսի միջավայրի, ուղենիցող բույսերի մասին, առանձին դեպքերում նաև հատուկ տեղենիություններ զանազան ուղագրական կողմերի վերաբերյալ, հատկապես վորքան առարածված և այդ բույսը (հատուկնույնություն, քիչ, շատ, շատ առատ և այլն)։ Գետը և լինի նաև հավաքողի ստորագրությունը։ Վերջինս անհրաժեշտ է նախ պատճառով, վոր ամեն մի հավաքածի իր վորպես գիտական դոկումենտ պետք եւ հանդես գա հավաքողի պատասխանաւորությամբ։ Յերկուրդ, իմանալով թե ով է հավաքել տվյալ բույսը, կարիք յեղած դեպքում կարելի յև դիմել հավաքողին և ստանալ լրացուցիչ տեղեկություններ կամ կապվել նրա հետ զանազան բուսաբանական խնդիրներ պարզելու համար։ Բույսերի վերաբերյալ տեղեկությունները կարելի յև գրել վորոշ մեծության թղթի կտորների վրա (ետիկետ) և գնել դասավորած բույսերի հետ։ Սակայն աշխատանքն արագացնելու և պարզեցնելու համար դաշտում սաւվորաբար այդ տվյալները գրում են հենց այն թղթի վրա, վորք մեջ դրված են բույսերը։ Պետք է գրել պարզ անպայման սեւ փափուկ մատիտով՝ թղթի ներսի կողմի վրա։ Հարմաք է գրել աջ ստորին անկյունում։

Հավաքողի համար պետք է անխախտելի կանոն լինի վոչ մի գեղքում հաւաք չդնել ճիշդուրյան վրա, այլ անպայման նետնակել հիմնական տեղեկությունները՝ գոնե տեղը և ժամանակը:

Բուլսերի մեջ՝ մասը հավաքում և զասավորում են նկարագրը՝
վաժ ձեռփ: Մական վորոշ բուլսերի վերաբերյալ անհրաժեշտ է
կիրառել հատուկ ձեռք: Համապատ կերպով նկարագրենք այդ ձե-
վերից մի քանիսը:

Որինակ ճիմարուսերը դժվար է հենց տեղում դասավորել, վորովհետև նրանց արմատներն ամուր կպած են հողին: Ճիմերը պետք ե փաթաթել թղթի մեջ և առն բերելով քանդել այն, առանձնացնել բուսերը, մաքրել հողից և ապա դասավորել յերկտակ թղթերի մեջ: Ի հարկե, այս գեղագում ևս հենց հաշվաքելու տեղում պետք ե նշանակել փաթեթի վրա բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

Ճահճակին բույսերի արմատների վրա ընդհանրապես մեծ քանակությամբ տիղմ և լինում: Այդ պատճառով նախքան թլցթի մեջ տեղափորելը պետք է արմատները լավ լվանալ, տիղմը և կողմնակի բրերը հեռացնել, ապա քամել չուրը և սրբիչով չորացնել:

Անձրկից հետո հավաքած բուլսերն առնասարակ ուշ էն չու-
քանում և հաճախ սեանում են: Պետք եւ խոնավ լեզանակին
կամ անձրկից հետո բուլս չհավաքել: Իսկ յեթե այդ անխուսա-
փելի յէ, վերցրած բուլսերը պետք եւ թափահարել և սպա գնել
քամու տակ, վոր չորանան: Բացի այդ, պետք եւ աշխատել արագ
չորացնել նրանց:

Զբարբուլսիքից շատերը ջրից հանելուց հետո թղթի վրա ուղղել ուղղակի մաննարե, նրանց տերեները հավաքվում և թըրջված վրձինի նման իրարենսեղմվում: Զբարուկսերը կարելի են ուղղել ջրի մեջ: Դրա համար ընտրած բույսերը պետք են ջոկել հարևան բույսերից, աղատել հողից (լիթե ամրացած են ողին) և մաքրել արմատը: Ապա պետք են վերցնել մի թերթ ամուր և չծծող թուղթ և սուղելով ջրի մեջ տանել բույսի տակ: Հենց ջրի մեջ պետք են ուղղել բույսը թղթի վրա և ապա վերջինիս լերկու ծալքից բռնած զգուշությամբ հանել ջրից: Այնուհետև պետք եքիչ սպասել, վոր ջուրը հոսի և ապա դնել ծալքած ծծան թղթի մեջ և տեղափորել բուսապահակի մեջ (շմոռանալ և տիկեալ): Յեթե ջրաբուլսը մեծ է, ապա պետք են վերցնել նրա մի քանի բնուրոշ մասերը (լողացող և սուղված տերեները, ծաղկած ճյուղերը և աղյու):

Առնասարակ բուլսը վորոշելու համար առաջնակարգ նշանակություն ունեն ծաղիկները, հետևաբար բուլսերի մեծ մասը պետք է հավաքել ծաղկած վիճակում։ Սակայն կան մի շաբաթույթում, վորոնց վորոշելու համար պատուղները նույնպես անհրաժեշտ են և լերենն ավելի շատ, քան ծաղիկները։ Այդպիսին են Cyperaceae, Cruciferae, Umbelliferae, Compositae, Chenopodiaceae, Boraginaceae և մի քանի ալլ ընտանիքների պատկանող բուլսերը։ Ի հարկե, հավաքելու համար ամենից ցանկալին այն վիճակն է, լերը բուլսի վրա արդեն կան լավ ձևակերպված պատուղներ, և վերջին ծաղիկներն ել դեռ չեն թափվել, ալլ կերպ ասած, լերը բուլսն ունի թե ծաղիկը, և թե պատուղը։

Սերմերը և չոր պտուղները կարելի են հավաքել թղթի փոքրը պարկիկների մեջ, վրան նշանակել տեղը, ժամանակը և դնել համապատասխան բռնցներին։ Սերմերի և պտուղների



հավաքումը կարենոր և շատ տեսակետից: Հաճախ կարիք ե լինում վորեն բույս հետազայտում մանրամասն ուսումնասիրեր, դրա համար անհրաժեշտ ե աճեցնել տվյալ բույսը և ստացիոնար դիտողություններ կատարել: Պարզ է, վոր այս տեսակետից ինչպես վայրի բույսերի, նույնպես ել կուլտուրական բույսերի տեղական որբաների սերմերի հավաքածուները խոշոր գիտական և գործնական արժեք ունեն: Յերբեմն վորմա բույսի մի քանի սերմը դառնում ե սկիզբ, հետազայտում բազմաթիվ հեկտարներ սերմանելու համար:

Նույն ձեռվ պետք ե հավաքել նաև բույսերի վեցետատիվ բազմացման որբանները՝ պալարները, կոճղեղները, կոճղարմատները: Թե՛ կոճղեղները և պալարները, թե՛ կոճղարմատները կարելի յեւ պահել թղթե պարկերում՝ չոր տեղում:

Կան բույսեր, վորոնց սովորական ձեռվ հավաքելու գեղքում չի կարելի ճիշտ վորոշել: Այդ բույսերը պետք ե հավաքել համապատասխան տվյալ բույսերի ուրույն հատկությունների հատուկ ձեռքով:

Ուսենիները և մանավանդ նրանց հիբրիդները վորոշելու համար անհրաժեշտ ե ունենալ լրիվ նյութ թե՛ ինչպիսի, և թե արական ծառի ծաղկած ճյուղերը, տիպիկ և լավ ձեռվորված տերևով պատաճ ճյուղեր և իդական ծառի պտղակալած ճյուղերը, առանձնապես կարենը են ծաղիկները և տիպիկ տերևները: Ինչպես հայտնի յեւ, ուսենիները նախ ծաղկում են և հետո տերև տառվա: Վերեւում արդեն ասել ենք, վոր նման դեպքերում պետք ե հավաքել մի քանի անգամ և տարրեր ժամանակի: Ուսենիների վերաբերյալ պետք ե ավելացնելնաև այն, վոր անհրաժեշտ ե նյութը վերցնել միեւնույն ծառերից: Դրա համար պետք ե ընտրել մի քանի ծառ ամեն տեսակից և վորեն ձեռվ նշան անել: Կարելի յեւ փափուկ սև մատիտով համարներ գրել ծառի հաստ ճյուղի վրա, ապա այդ համարները դնել նաև զանազան ժամանակ հավաքած նյութերի ետիկեաների վրա: Ծոցատերում պետք ե նշանակել նույն համարները և մանրամասն գրել թե՛ ինչպես նորից դառնել նույն ծառերը. պետք ե ասել, վոր տերք տալուց հետո ծառերը հաճախ անճանաչելի յեն զանում, այդ պատճառով ել պետք ե նշանակել վորմեն ճիշտ ճանաչելի առարկա (աղբյուր, մանապարհ, հեռագրասեղման և այլն) և ծառի հեռավորությունը նրանից՝ քայլերով կամ մետրերով: Ի հարկե, ավելի լավ ե համարը ծառի վրա գրել վոչ թե մատիտով, այլ յուղաներկով, կամ

թե՛ չե թիֆեղի վրա տպած համար կախել: Վերջինիս համար պետք ե ընտրել ծառի վրա ծածկված տեղ և աչքից հեռու:

Մասրենին կամ վմբրի վարդը կովկասում ունի մի քանի տասնյակ տեսակ և նույնպես պատկանում է դժվար ուսումնասիրեկի բույսերին: Մասրենիները հավաքելիս պետք ե վերցնել վոչ միայն տերեւով պատաճ և ծաղկած ճյուղերը, այլև հին ճյուղ մի մասը, վորի վրա կան բնորոշ փշեր ուղիղ կամ կորացած, նույն կամ տարրեր մեծության, խիտ կամ նոսր դասավորված և այլն: Անհրաժեշտ ե հավաքել նաև հասած պատուղները: Մասրենիներն ել պետք ե համարակալել և նմուշները վերցնել նույն թիբերից:

Սոշենիներն ևս նույն ձեռվ պետք ե հավաքել: Մրանք գեռակ լույլ չեն ուսումնասիրված: Ամեն մի մոշենու թիբից պետք ե վերցնել 1) նորմալ ծաղկած ճյուղը, ցողունի հիմքի վրա լիւդող ծաղկած ճյուղերը բնորոշ չեն, վորովհետև այլ պատկեր են առվիս, 2) նորմալ պտղակալած ճյուղը լրիվ չհասունացած պըշտուղներով, 3) տերեւով պատաճ ճյուղի մի մասը մի քանի նորմալ տերեւներով, ցողունի և ճյուղերի հիմքի տերեւներն այլ ձեռվ չեն և բնորոշ չեն բույսի համար, բնորոշ չեն նաև լիրիտասարդ ու լրիվ չզարգացած տերեւները, 4) ցանկալի յեւ առանձին չորսացնել պակաբերթիկները ծծան թղթի կամ բամբակի շերտերի արանքում:

Մեզ մոտ առանձնապես հետաքրքիր են վայրի պտղատուծառերը և թփերը: Նրանց անպայման պետք ե հավաքել մի քանի առնվազն լիրկու անգամ, զարնանը պետք ե վերցնել ծաղկած ճյուղը և ծաղիկների մի մասը չորացնել բամբակի կամ ծըծան թղթի արանքում: Այսուհետև պետք ե վերցնել ճյուղերն այն ժամանակ, լիր պտուղները լրիվ ձեռվորված են և տերեւները բնորոշ ու վերջնական տեսք են ստացել: Վերջապես պետք ե ունենալ նաև հասունացած պտուղները և սերմերը: Ի հարկե, այս գեղքում ել պետք ե ծառերը նշան անել և ճիշտ նույն ծառերից վերցնել ճյուղերն ու պտուղները: Բացի վերոնիշչակից ծառի կամ թփի վերաբերյալ պիտի գրի առնել նաև բարձրությունը և սաղարթամասի ձևն ու խտությունը: Այսպես պետք ե հավաքել վայրի տանձի գեռ չուսումնասիրված տեսակները, խընածքը, հոնը, կաղինը, զկեռը, սիզը կամ ալոնը, հաղարձը և այլն:

Խաղողը նույնպես վայրի աճում և մեր մի քանի վայրերում կառում, իջևանում, կափանում և ուսումնասիրելու համար շա-

հետաքրքիր թուփ և Վայրի վիճակում աճող խաղողը մեզ մոռ
գեռ ուսումնասիրված չե: Հավանական ե, վոր նա չերկառուն
բուլու ե: Ուրեմն պիտի փնտոել թե արական, և թե իգական
բուլութերը: Խաղողն ևս պիտի հավաքել մի քանի անդամ՝ ծաղ-
կած վիճակում, ձևակերպված, բայց գեռ խակ պտուղներով, հա-
սունացած պտուղներով և սերմերով: Տերեները պետք ե վերց-
նել հատկապես մատի միջին մասից: Պետք է տեղում դժուել և նշա-
նակել 1) պտուղի հյութը գունավոր և թե վոչ, 2) թփերն
աճում են խմբերով, թե ցրված, 3) իբրև թփերը խմբերով են
աճում, ապա մի խմբի մեջ միայն մի սեռի թփեր են, թե
խառը, 4) ինչ բուլութեր են աճում խաղողի հետ:

Վորոշ բուլութեր պետք ե հավաքել պտղակալած, այդ մասին
մենք արդեն ասել ենք: Այսուղ պետք ե ավելացնել, վոր ան-
հրաժեշտ և հավաքել, քանի դեռ պտուղները լրիվ չեն հասունա-
ցել, հակառակ դեպքում նրանք հեշտությամբ թափվում են և
բուլութերը հերարիումի մեջ մնում են առանց պտուղների: Այս-
պիսի բուլութերին են պատկանում և բոշխերը (Cyperaceae):

Պարագիտ բուլութերը՝ ճրագախոտը, զալլախոտը (զալձը)
պետք ե հավաքել լրիվ ծաղկած և պտղակալած վիճակում: Ան-
պալման պետք ե վերցնել նաև այն բուլութ, վորից նրանք սնունդ
են ստանում: Սա շատ կարեռ և բուլութերը ճիշտ վորոխելու հա-
մար, վորովհետև ամեն պարագիտ ապրում ե վորոշ մեկ կամ մի
քանի բուլութի վրա: Գալլախոտը միշտ ել վերցնում են հյու-
րընկալ բուլութի հետ, վորովհետև նա աճուր փաթաթված և վեր-
ցինիս վրա: Սակայն բացի դրանից պետք ե վերցնել նաև առողջ
ճրուղը: Ինչ վերաբերում և ճրագախոտի հյուրընկալին, վերջի-
նիս գտնելն ավելի դժվար եւ ճրագախոտն իր ստորերկրտա մա-
սով կպած և նրա արմատներին, վորտեղից և ծծում ե իր սնուն-
դը: Իսկ հողի նույն կտորի վրա սովորաբար մի քանի տարբեր
բուլութեր են գտնվում և դժվար ե վորոշել, թե վորին ե ամրա-
ցած պարագիտը: Այդ պարզելու համար պետք ե ճրագախոտի և
մոռակա մի քանի բուլութի շուրջը բավական խոր փորել հանել
հողի մեծ կտոր և դնել ջրի մեջ: Յերբ հողը կփափկի, զգուշու-
թյամբ հեռացնել այն, այնպես վոր պարագիտը չտրկի հյուրըն-
կալից: Հենց այդպես ել պետք ե չորացնել ճրագախոտն իր հյու-
րընկալ բուլութի հետ:

Ելի շատ ծաղկավոր բուլութեր կան, վորոնց վերաբերմանը
պետք ե կիրառել հավաքելու հատուկ ձևեր: Բուլութի վրա կատա-

յած գիտողությունը, փորձը և մասնագետների խորհուրդները
ցույց կտան, թե ինչպես պետք ե հավաքել այս կամ այն բույսը:
Այժմ համառոտ նկարագրենք, թե ինչպես պետք ե հավաքել
վաշ-ծաղկավոր բուլութերը:

Զարիսաները կամ պտերները պետք ե հավաքել իրենց բաղ-
մացման որդաններով: Վերջիններս ընդհանրապես գտնվում են
տերեւի ստորին մակերեսի կամ հատուկ տերենների վրա: Դրանք
չառ մանր սղորանովիներ են, վորոնք խմբված են կետերի կամ
գծերի ձևով: Զարիսանները պետք ե հավաքել սովորական ձևով:
Մանր ձարիսանները պետք ե վերցնել ամբողջական, իսկ մեծերից՝
մեկ կոմ յերկու տերեւ և կոնդարմատի մի մասը: Մեծ տերեւը չը-
պետք ե կտրել, այլ միայն ծալել և անպայման վերցնել ամբողջ
ջական: Ժայռերի ճեղքերում աճած ձարիսանները (ինչպես և առ-
ձասարակ այլ բուլութերը) հարմար ե հանել ծուած յերկար մեխով,
վարի շնորհիվ ամբողջ բույսն արմատի և տերենների հետ դուրս և
հանվում քարերի արանքից:

Զիտձեները պետք ե հավաքել յերկու անգամ: Գարնանը
նրանց վորոշ աեսակները տալիս են հատուկ սովորակիր ցողուն-
ներ. վորոնց ծայրին հասկած հավաքված են սովորատերներ՝
սովորանոթներով: Ավելի ուշ նույն կոճղարմատից առաջանում են
գեղեցտափիվ ցողուններ՝ ողակած դասավորված բազմաթիվ կա-
նաչ ճյուղերով, առանց սովորատերների: Յերկու տիպի ցողուն-
ներնել անհրաժեշտ ե հավաքել: Զիտձետներն աճում են ջրի մոտ,
խոնավ հողերում և խմբերով: Յերկրորդ անգամ նրանց գտնելը
գժվար չե, պետք ե միայն փայտի ձողով, քարով կամ այլ ձևով
նշան դնել տեղում և այդ տեղի վերաբերյալ վորոշ նշանակում-
ներ անել ծոցառետրում:

Մամուռները հավաքելը շատ հեշտ է: Մամուռները մանը
բույսեր են, վարոնք մեծ մասամբ աճում են խոնավ վայրերում:
Նրանք բաժանվում են յերկու խմբի՝ ցողունավոր մամուռներ և
լերգունների մի մասն ունեն բարակ հյութալի ցողուն, շատ բա-
րակ ու նուրբ տերեսիկներ: Լերգունների մեծ մասի մարմինը
տափակ ե բաժանված չի ցողունի և տերենների: Մամուռները
հողի կամ ծառի կեղենին ամրացած են լինում բարակ արմատա-
նման մազիկներով, վորոնք կոչվում են սիդոյիդ: Մամուռներն
աբժան չունեն:

Մամուռները պետք ե հավաքել անպայման սովորանոթնե-

քով: Վերջիններս զանազան ձևի տուփիկներ են և բնդէանը բաղկացած յերկար վրա կպած են մամուռի ծայրին կամ կողքին, իսկ լերդուկի՝ տափակ մարմին: Խոնավ տեղից վերցրած մամուռը գետք և թերթերի արանքում քամել վոր ջրի մի մասը հեռանա և ապա միայն տեղավորել թղթի մեջ: Ծառերի վրա աճող մամուռը պետք և վերցնել կեղեւ հետ: Յեթև մամուռն աճում է հողի վրա, ապա պետք և վերցնել հողի հետ, հոռացնել ավելորդ հողը, թողնել մոտ մի սանտիմենտ հաստությամբ և ամբողջ ճիմը տեղավորել թղթե ծրարի մեջ: Առհասարակ մամուռները պետք և վերցնել ճիմերով, վորովհետև հաճախ միասին խառը լինում են մի քանի տեսակ և միայն մտնըազնին հետազոտության գեղքում նրանց մեջ հայտաբերված են այդ տեսակները: Ի հարկե, բոլոր գեղքերում ել պետք և զրի առնել տեղը, ժամանակը և այն առարկան վորի վրա աճում և տվյալ մամուռը: Յեթև մամուռը ծառից և վերցված, ապա ցանկալի յև նշանակել նաև ծառի տեսակը կամ վերցնել ծառի ճյուղը՝ վորոշելու համար:

Եղիսլի հեշտ և հարածուերի հավաքելը: Սրանք գտնվում են քարերի ժայռերի և հողի վրա և զանազան ձևեր ունեն: Նրանց մի մասը տափակ և և կպած և քարին կամ ծառի կեղեւին: Այլ տեսակների տափակ մարմինը բարձրանում և քարից կամ ծառի կեղեւից: Կան և այնպիսիները, վորոնց մարմինը ճյուղավոր և, կախված են լինում ծառերի ճյուղերից և այլ առարկաներից կար աճում են հողի վրա: Քարաքոսն անպայման պետք և վերցնել այն առարկայի հետ, վորի վրա նա ամբացած և: Հավաքած քարաքոսը պետք և դնել թղթե պարկի մեջ, վորի վրա զրել բուլոր անհրաժեշտ ավյալները տեղի, ժամանակի և միջավայրի վերաբերյալ: Թերթածե և ճյուղավոր քարաքոսերը կարելի յև տեղավորել նաև թղթերի մեջ՝ ծաղկավոր բույսերի նման: Սակայն չոր վիճակում նրանք հեշտությամբ փշրվում են. չփշանալու համար թերթերի մեջ դնելուց առաջ նրանց պետք և քիչ թրչնել կամ թե հավաքել խոնավ յեղանակին: Բացի այդ, առհասարակ պետք և աշխատել, վոր վերցրած նմուշների վրա լինեն նաև բազմացման որպանները:

